

ժխտելով մեզի այն բարոյական երաշխաւորութիւնը, զորն որ իրաւամբք կը յուսայինք ընդունել, ստիպեց զմեզ անոր տեղը առժամանակեայ նիւթական երաշխաւորութիւն մը ձեռուընթա ունենալ. բայց ասկից որովհետեւ երկու տերութեանց Օսմանեան պետութեան նաւահանգիստներուն ու ջրերուն մէջ բռնած գիրքը՝ մեզի աւելի իրաւունք մըն ալ կու տայ փոխադարձ հաւասարակշռութիւննիս պահելու զինուորական գիրք մը բռնելով: Դանուբեան իշխանութեանց գրաւումը պարզ առժամանակեայ պիտի ըլլայ, մեզի միայն իբրև գրաւ պիտի ծառայէ, ինչուան որ Սուլթանին պաշտօնեայքը՝ մեզի նկատմամբ աւելի լաւագոյն խորհրդով շարժին և երկու տերութեանց մեզի գէժ ցուցուցած գորգոյն կերպը գազրի. հիմակուց կը մերժենք ու և իցէ աշխարհակալութեան կամ երկիր մեծցրնելու գիտաւորութիւն: Այսպէս չուզեր այսօրուան օրս, ինչպէս որ առաջ ալ չէ ուզած, Օսմանեան պետութիւնը կործանել, կամ թէ անոր միասովք ինքը մեծնալ: Ինքը արևելքի մեր կրօնակիցներուն համար ուրիշ բան չպահանջեր, բայց և թէ ճիշդ իրենց առջի վիճակը և ի վերջոյ իրենց թագաւորին հովանաւորութեանը տակ ունեցած արտունութեանցը պահպանութիւնը: Բայց նոյնպէս պէտք է ալ որ Տաճկաստան իր կողմանէ չարհամարհէ մեր առանձնական դաշնագրութիւններն ու անոնցմէ առաջ եկած հետևանքները. և խորհակտ գործքեր, ծածուկ հալածանքներ ու շարունակական հարստահարութիւններ չձգեն զմեզ այնպիսի վիճակի մը մէջ, որ անտանելի ըլլալով երկար ատենի՝ բռնագատէ զմեզ ասոնց ամենուն գարմանը բազդին կոյր արկածիցը յանձնելու:

Լոնտոնայի արտաքին գործոց պաշտօնարանին մէջ խորհրդակցութիւն կ'ըլլայ, որուն մասնակից կ'ըլլան Աւստրիոյ, Գաղղիոյ ու Բրտանիոյ գեսպանները: Ասոնք միաբան հասարակաց ծանուցագիր մը կու տան Բեզերպուրկի գահլճին՝ ստիպելով զանիկայ զիջումներ ընելու, որպէս զի Տաճկաստանը առանց իր ինքնիշխանութեան իրաւանցը մնաս մը հասցընելու՝ կարենայ Ռուսաստանի խնդիրները կատարել:

ՆՈՐ ԳԻՒՏ

Բամբալի անխորժելի յափուլիս իջ:

Ըրէտեր ու Տուշ գերմանացի բնաբանները այս մտերս մասնաւոր յատկութիւն մը գտան բամբակին վրայ, որ շատ օգտակար կ'ըլլայ գործածութեան, և շատ փորձերով հաստատեցին ասիկայ. այս յատկութեամբ՝ այն մակզէնը, որ բամ-

բակէն անցած օգուն մէջ կը կենայ, չխմորիր ու նեխութենէ ազատ կը մնայ: Իրենց ըրած ամենէն պարզ փորձը այս էր. ապակիէ անօթ մը առին ու մէջը ջրոտ մտի հետ ջուր գրին ու եռացուցին. ետքը անօթին բերանը թեթեմ մը գոցեցին բամբակէ խցանով, և բերնին ծայրերն ալ բամբակով պատեցին ու գերձանով մը սիմեցին: Այս կերպով եռակէն մերժուած անմաքուր օգին տեղ, բամբակին մէջէն անցած օգը միայն ներս կրնայ մտնել: Արգ այս օգուն մէջ միւր այնպէս լաւ պահուցաւ, որ 24 օրուընէ ետքը երբոր բացին ամանին ծակը՝ ամենին և ոչ պզտիկ հոտ մը կամ աւրուելու ու նեխութեան նշան մը կար. բայց ի մէկքանի ձերմակի զարնող թեթեմ բծերէն, որ ասօքիս անգին մտին վրայ կ'երևնային, և այս ալ թերևս ամանին մէջ քիչ մը մնացած գէշ օգէն էր. նմանապէս մտի ջուրն ալ ամենին նոր եփած արգանակի կը նմանէր:

Բայց գեռ չգիտցուիր թէ ինչ է այս բանիս պատճառը, ինչ կերպով բամբակը ներս մտած օգը կը մաքրէ, և թէ այդ յատկութիւնը միայն բամբակին կը պատշաճի արդեօք՝ թէ ուրիշ ամէն բուսական գոյացութեանց ալ հասարակ է, և այլն:

Տեղաւարժ մեծնայ իջ:

Պրէշայի գաւառիս լրագրոյ մարտի 8 թուոյն մէջ այս հետեւեալ գիւտը կը կարդանք, որուն ստուգութեանը վրայ թէպէտ երաշխաւոր չենք կրնար ըլլալ, բայց հետաքրքրական ըլլալուն համար՝ կը փութանք մեր ընթերցողաց հաղորդելու, որ եթէ ստուգուելու ու առաջ երթալու ըլլայ՝ մանրամասն ստորագրութիւնն ալ կը գնենք օրագրիս թերթերուն մէջ:

Իսալացի հիւս մը տեղաւարժ մեքենայ մը հնարեր է Պրէշայի մէջ, որ ինքիւրեն կը շարժի՝ առանց ամենին մարդկային օգնութեան մը ու վառելի նիւթի, և առանց օրական ծախքի, բայց ի օժեղու նիւթէն, որ շարժմունքը աղէկ ընթացքով առաջ երթալու համար հարկաւոր է: Այս կերպով առանց շոգւոյ կամ ելեքտրական հոսանքի մը ուղածիդ չափ ակողական զօրութիւն մը կրնաս տալ, և ինչպէս որ կ'երևայ՝ այս մեքենայն կրնայ ջուրը շատ բարձրութեան վեր հանել: Ասոր մեծը շինելու համար գրեթէ 20,000 ֆրանգ պէտք է, որ այն ատենը մեքենագ հարիւր ձիու զօրութիւն կ'ունենայ: Ասիկայ թէ շոգեկառաց ու շոգենաւերու և թէ գործարաններու մէջ շոգեւարժ մեքենաներու կրնայ գործածուիլ:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ